

տիները ժամանակացոյցն և այլ կարգադրութեանց վրայ անհամաձայնելով խնդրեն սննդաւ կը տաքանայ որ ծայրահեղութեան կհասնել ի ներկայութեան աշակերտաց Պատ. Հոգաբարձութիւնն ամէն քանք ի գործ դրաւ որ սոյն կռիւք ընդհատէ, բայց անկարելի եղաւ հաշտութիւն գոյացնել, երկու կողմն ալ կպնդեն մէկմէկու հրաժարեցոյցման վրայ ճշմարտութիւնը մէկ կողմը չէ, այլ երկուքն ալ ունին իրենց ուղիղն և սխալը: Հոգաբարձութիւնն երկու կուռող էֆ. ներն ալ իրենց պաշտօնէն հրաժարեցոյց, թէ և վարժարանը փակուած չէ, տղայք օրական մէկ կամ երկու դաս առնելով տուն կվերագտանան: Ժողովուրդը խիստ զբոսուած է վարժարանի խնդրէն: Առժամեայ Թաղ. Խորհուրդն և հոգաբարձուներն իրենց անվերջանալի ժողովները կգումարեն ամէն օր, բայց արդիւնք գոյացած չունին: Զեմ զիտեք Վ. Պոլսոյ կալուածոց Հոգաբարձութիւնն ալ լուր ունի կամ ինչ կետըհի այս մասին, կամ միթէ ասոնցմէ դատ ուրիշ դատատուններ կը պակսեն որ շուտով պաշտօնի չեն կոչուիր:

Դեռ կենդանի է, բայց գործնական տեսակետից նշանակութիւն ունեցողը և վճռականը այժմ կրթութեան ու անկիրթների բաժանմունքն է: Ով մարդկանց այս երկու կարգի բաժանող սահմանի վրայ է կանգնած, նա հասարակութեան անդամ է. իսկ ով այս սահմանից դուրս է, նորա առաջ փակ է ինտիմութեան (connubium) և վաճառականութեան (commercium) մուտքը: Նորա հետ մօտիկ ծանօթութիւն ունենալը, չասկնք ազգակցական կապերով միանալը, պատշաճութեան տեսակետից անհնարին է համարուում: Դիւրամ է տարբերութիւնը: Ո՞րն է կրթութեան ուղին ու ծուծը. ի՞նչ է նորա նշանակութիւնը գործնական խօսքի մէջ: Սկսենք արտաքին նշաններից:

Լրագրում ասած է. ըստ երևութիւն կրթութեանների դասակարգին պատկանող մի մարդ, իր տարօրինակ վարմունքով ընդհանուրի ուշադրութիւնը զրաւեց: Լրատուն ի՞նչ նշաններից որոշեց այն մարդու կրթութեան լինելը: Երևի նորա հագած սերտուկից, շատ կարելի է ձեռնոցներից, որոնք գոնէ լի օրը կրթութեան նշան են. նոքա ցոյց են տալիս, որ իրենց գործ ածողը ձեռքի աշխատանք չի անում: Աւելի հաւաստի նշաններ են սպիտակ ձեռները և երկար եղունգները: Տպագրական ընկերութիւնը բոլոր կրթութեան մարդկանց ծանուցանում է, նոր լոյս տեսած գրականութեան պատմութեան կամ ընդհանուր պատմութեան մասին և բոլորի վերայ պարտք է դնում այդ գրութեանը գնել: Ո՞վ է այստեղ ի նկատի առնում, և ո՞վ այդ իւր պարտքը պիտի համարէ: Եւ ո՞ւմ ի նկատի ունի զիմնագիրայի աշակերտուհին, որ հիւր գնացած է լինում և վերադառնալով պատմում է այն կրթութեան մարդկանց մասին: Որոնց նա այնտեղ տեսել էր:

Ամենայն բարեխղճութեամբ քննելով այն զգացումը որ իմ մէջ կապուում է կրթութիւն խօսքի գործածութեան հետ, ես գրտնում եմ հետեւեալը. կրթութեան է նա, ով ձեռքի աշխատանք չի անում, ով զիտէ պատշաճ ձեռով հագնուել և պահել իրեն և հասարակութեան մէջ սովորաբար դատողութեան առարկայ դարձող ամեն նիւթի մասին

Կ Ր Թ Ո Ւ Ի Թ Ո Ւ Ի Ն.

(Պատուէն)

Ա) Այս խօսքի ընդունումը իմաստը: Ժամանակակից սերունդի համար կրթութիւն բառից աւելի սովորական դարձած բառ քիչ կայ: Հէնց որ խօսք է լինում մի որ և է մարդու մասին, իսկոյն սկսում են քննել, կրթութեան է նա թէ՞ ոչ: Եւ իրօք այս մի շատ նշանաւոր հարց է. նորա լուծումից կախուած է թէ արդեօք ի՞նչպէս պէտք է վարուել այն մարդու հետ. կարելի է իրեն հաւասար մէկը ընդունել և նստել նորա հետ մի սեղանի շուրջը թէ՞ ոչ: Կրթութեաններ և անկիրթներ. ահա թէ ներկայումս որպիսի բաժանմունք են դնում հասարակութեան մէջ: Այս բաժանմունքը նախորդ բոլոր որոշմանց տեղն է բռնել: Առաջ մարդոց բաժանում էին այսպէս. ազնուականներ և հասարակ մարդիկ: Հաւատացեալներ և անհաւատներ, բողոքականներ և կաթոլիկներ, քրիստոնեաներ և հրէաներ: Ծշմարիտ է, այս բոլոր բաժանմունքների մասին յիշողութիւնը

եղած խօսակցութեան՝ կարող է մասնակցել։
 Իբր նշան կրթութեան ծառայում է նաև օտարազգի բառերի գործածութիւնը, ես ի նկատի ունիմ ի հարկէ ուղիղ գործածութիւնը, ով սխալուում է նոցա նշանակութեան կամ արտասանութեան մէջ, նա իրեն կրթութեան մասին անձեռնառու նախապաշարումն է յառաջ կոչում։ Ընդհակառակը մէկի կրթութեամբ լինելը ապացուցուած կլինի, եթէ նա գիտնայ օտար կրթութեամբ ազգերի լեզուներ, օրինակ ֆրանսերէն կամ իտալերէն, էլ չենք ասում յռնարէն ու լատիներէն։ Դակ ով միայն իւր մայրենի լեզուն գիտէ, նա իրաւունք չունի կրթութեամբ անունը կրելու։ Օտարազգի բառերի կրթութեան նշան համարուելու պատճառն այն է, որ նոցա գործածութեամբ մարդ հասկանում է թէ ինքն էլ գիտի օտար լեզուներ և թէ նոցա միջոցով էլ կարող է իւր մտքերը արտայայտել թերեւ աւելի գեղեցիկ և լաւ, քան իւր զարգացմամբ քիչ յետ մնացած, մայրենի լեզուի միջոցաւ։ Այստեղ մեր առաջ բացուում է վերջին և վճռական նշանը կրթութեամբ է նա, ով քաղաքացիական ուսումնարան է աւարտել կամ դոնէ վեց դաստառն և ի հարկէ, յաջողութեամբ, Դակ յաջողութեան մասին, հետևապէս և ստացած կրթութեան մասին, ամեն կասկած փարատելու համար Պրուսիայում նորերս այսպիսի կարգ է մտցրած, որ աշակերտները քննութիւն են տալիս կայսերական վերահսկողութեան ներքոյ և դորա համապատասխան վկայականներ են ստանում։ Սորանով նոքա արտօնութիւն են ձեռք բերում զօրքի մէջ անկիրթներից տարբերուելու։ Այսպիսով մենք կրթութեան համար կառավարութեան ձեռքով հաստատուած չափ էլ ունինք։ Այդ չափին յարմարուելու համար հարկաւոր է գիտնալ այն ինչ որ անցնում են միջնակարգ ուսումնարանների առաջին վեց դասարաններում։ Սորա հետ միասին էական պայման է նաև երկու օտար լեզուների ուսումնասիրութիւնը։ Այն ուսումնարանները որոնց մէջ անցնում են միայն մի օտար լեզու, սկզբունքով «բարձր» չեն ճանաչուում։
 Որովհետև ամեն մարդու համար ցանկալի է և իւրաքանչիւր մէկի համար իրօք

կեանքի ծանրաշիւթ հանդամանք է ներկայանում իւր և իւր ընտանիքի կրթութեամբ համարուելը, ուստի զարմանալի չէ, որ մեր ժամանակները կրթութեան հնարաւորութեան և միջոցների պահանջը ինչպէս նաև առաջարկութիւնը արագ աճում է։ Եւ զարուած աղաների և աղջիկների բարձրագոյն ուսումնարանների թիւը մանաւանդ այս դարու վերջին կիսում շատ արագ բազմանում է, րոպէս որոշների թիւը կրկնապատիկից անցկացաւ։ Ուսումնարանական կրթութեան օգնութիւն և լրումն են տալիս ամեն տարի անթիւ քանակութեամբ լոյս տեսնող ինքնակրթութեան ձեռնարկները, հանրագիտական բառարանները, գեղարուեստի և գրականութեան պատմութիւնները, բացի սորանից ամսաթերթերը և շաբաթաթերթերը անընդհատ գիտական աշխարհից վերջին նորութիւններն են բերում։ Նոցա մասին արած պատրաստի դատողութիւնների հետ միասին։

Սակայն ինչպէս է եղել, որ կրթութիւնը այսպիսի մեծ նշանակութիւն է ստացել։ Նրեի հասարակութեան վերջին հարիւր տարուայ ընթացքում կրած մեծ փոփոխութիւնն է այս երեւոյթի պատճառը, Ժողովրդի մէջ միջին դարերից ժառանգութիւն մնացած ազնուական—քաղաքացիական և դիւղական դասակարգերը տապալուեցան։ Հասարակութիւնը փխրուն դարձաւ և բաժանուեց առանձին առանձին մասնիկների, անհատը ինքնուրոյն արժէք ստացաւ, նորա զիրքը այլևս իւր ծագմամբ չի որոշուում, այլ հարստութեան և գիտութեան չափով։ Նորա գիրքը նաև և առաջ, իւր սեպհակաճութեան չափով է որոշուում։ Կարողութիւնը (նիւթականութեան) կշիռ է տալիս, բայց noblesse oblige — (ազնուականութիւնը) որոշ պարտք է դնում։ Ինչպէս որ ազնուական դասակարգը պահանջում էր իւր անդամներից politesse և cenduit (քաղաքավարութիւն և վարմունք), այնպէս և նոր հասարակութիւնը իւր անդամներից պահանջում է կրթութիւն։ Ծնարիւր է, նիւթական կարողութիւնը հանդիսանում է այստեղ իբր էական, անհրաժեշտ հիմունք, բայց մինչև անգամ հարստութիւնն էլ առանց կրթութեան մարդուս լիովին չի մտցնում հասարակութեան անդամների շար-

քը: Մինչև անգամ կրթութիւնը որոշ չափով կարող է նիւթական պակասի տեղը լրացնել: Դռնէ Գերմանիայում համալսարանական վկայականը ոչ հարուստներին էլ հնարաւորութիւն է տալիս հասարակութեան անդամ լինելու: Իսկ ընդհանրապէս հարստութիւնը և կրթութիւնը սերտ կապ ունին իրար հետ: Ինչպէս այդ ցոյց են տալիս նաև հետեւեալ ընդհանուր ընդունելութիւն գտած խօսքերը. «ունեւոր և կրթուած դասակարգեր» հակառակ բանուոր և չունեւոր դասակարգերի: որոնք միևնոյն ժամանակ և «անկիրթ» են: Առաջինները հասարակութիւն են կազմում նոցա երեսնաները սովորում են բարձրագոյն դպրոցներում և դասնում են կամաւոր զինուորներ կամ սպաներ: Իսկ վերջինները ժողովրդական դպրոցից այն կողմը չեն անցնում և զօրքի համար տալիս են հասարակ զինուորներ:

Այս դժերով, ես կարծում եմ, որոշուած կարելի է համարել. «կրթութիւն» խօսքի ներկայումս ամենքից ընդունուած իմաստը: Այժմ մենք պէտք է տեսնենք զործի իսկական նշանակութիւնից թղթած այս խօսքի հակադիր իմաստը. բայց առաջ ընդհանուր հայեացք ձգենք այդ իմաստի պատմական ընթացքի վերայ:

Բ) Ստուգաբանութիւնը եւ պատմութիւնը:—Կրթութիւն (bildung) խօսքը իբր հոգեւոր կեանքի որոշ կազմակերպութիւն նշանակող բառ համեմատաբար նոր ծագումն ունի: Նա երևան է գալիս միայն անցեալ դարերի կիսից: Առաջ bilden, Bildner, Bildung բառերը գործ էին ածուում երեւի Դոնի բառարանից վերջրած, առաւելապէս գեղարուեստական և արուեստական մշակումն նշանակելու մտքով, որ Bild խօսքի ծագմանն էլ համապատասխան է, եթէ վայզանտի հետ (Deutsches Wörterbuch) ընդունենք թէ նա յառաջ է գալիս bil արմատից, որ նշանակում է տողել, հարթել (նոյնն է և bail (կարին) խօսքի մէջ): Փոխարեքական մտքով bildung Bild նշանակում է նաև երևակայական ձև, պատկերացում (): Այնուհետև sich bilden (կրթուել) կամ sich ausbilden (զարգանալ) խօսքերը գործ են ածում գործա-

րանաւոր էակի աստիճանաբար զարգացումը նշանակելու համար. ընդունելով սակայն այդ զարգացումը իբր մի վերացական գեղարուեստական սկզբունքի ստեղծագործող գործունէութիւն: Այսպիսի գործածութիւնից էլ յառաջ եկաւ այն իմաստը, որ ԺԸ. դարու երկրորդ կիսում bilden, Bildung խօսքերը ստացան և դարձան մանկավարժութեան մէջ միշտ գործածուող եղանակ:

Այս նոր բառակազմութիւնը կապ ունի այն ժամանակները կրթութեան խնդիրների մասին եղած հայեացքների փոփոխութեանց հետ: Ուրոշեալ նպատակի համար մեքենական մարդու գործարանաւոր էակների օրինակով, ներքին բնատուր ընդունակութիւնների բնական զարգացում: Ահա մանկավարժութեան վերանորոգող այն մեծ շարժման զլխաւոր հիմնակէտը, որ Ռուսոյից է սկսուել: Որքան ինձ յայտնի է Պետալոտցին և Հերտերը առաջին հեղինակներն են, որ վերթութիւն խօսքը դարձրին ինչպէս ուսուցչի և դաստիարակի գործունէութիւնը: այնպէս նաև այդ գործունէութեան արդիւնքը՝ սանկիկ ներքին — հոգեկան կազմութիւնը որոշող, մի մշտական արտայայտութիւն: Այսպէս Պետալոտցին իւր առաջին գրութեան «Ծգնաւորի» առաջին ժամերի մէջ ասում է. «Մարդկային բնութեան ներքին ոյժերի մինչև զուտ մարդկային իմաստութեան աստիճանը հասցրած ընդհանուր զարգացումը՝ իւրաքանչիւր մարդուն նաև առմիկի կրթութեան ընդհանուր նպատակն է: Վարժութիւնները իւր ոյժը և մտաւոր կարողութիւններ մասնաւոր գէպքերում և գրութիւններում գործադրելը և նոցա յարմարեցնելը, դասակարգային կամ պարապմունքի համեմատ (профессиональное) կրթութիւնն է: Վերջինս միշտ պէտք է մարդկային կրթութեան ընդհանուր նպատակին ենթակայ լինի: ... Ով մարդ չէ՝ որի ներքին կարողութիւնը զարգացած չէ՝ նա զրկուած է իւր մտաւոր կոշմանը համար անհրաժեշտ հիմունքից: Այսպէս նաև Հերտեր իւր զիննագիտական դասատուութեան մասին» ասած ծառում (1786) հանրամարդկային կրթութեան մէջ, որ պարապմունքի համեմատ ստացած կրթութեան հիմքը պիտի

կազմէլ տեսնում է նոյն նպատակը: Մասնագէտ դասնալուց առաջ մենք մարդիկ ենք: Այն ինչ որ մենք իբր մարդ գիտենք և իբր պատանիներ սովորել ենք, մեր ամենալու և օգտակար կրթութիւնն է, և ուրիշն մենք չառ կարիք չունինք մտածելու թէ տէրութիւնը մեզ ի՞նչ է կամենում զարձնել: Եթէ դանակը սուր է, նորանով ամեն բան կարելի է կտրել: «Բառիս բուն նշանակութեամբ կրթութեամբ մարդ» կարելի է զառնալ, ասում է նա իւր «գեղեցիկ արուստների և զինադիպան կրթութեան իսկական ըմբռնման մասին» աւելի ուշ արտասանւած մի ծառի մէջ, նախ և առաջ հների հետ յարաբերութեան մէջ մտնելով: որոնք մարդկութեան հոգեւոր զարգացման հիմնադիրներն են, և ճշմարիտ լաւ և կիրթ ճաշակի ու լեզուների գործածութեան նկատմամբ դերիվորոյ հմտութեան մշտական օրինակներն են: Մենք նոցա օրինակով պիտի ձեւակերպենք մեր մտածելու և գրելու եղանակը, նոցա օրինակով պիտի կազմակերպենք մեր միտքն ու լեզուն: որպէսզի օգտակար մարդիկ դառնանք... Ով այս բոլորը արել է, նա կնշանակէ, սովորել է մարդասիրութիւն, այսինքն մարդկային ճիշտ միտքը և մարդու դուռ զգացումը ըմբռնել, այդ պատճառով էլ նա ամեն բանից վեր կը դառնէ կանոնաւորութիւնը և ճշմարտութիւնը: Ճշգրտութիւնը և ներքին լաւութիւնը, մէկ խօսքով նա կրթութեամբ մարդ կհամարուի և այդ կերեւայ ինչպէս մեծ, այնպէս նաև փոքր բաներում: Այս իսկ պատճառով Հին հելլենականների ուսումնասիրութիւնը կոչուում է *humaniora* (մարդասիրութիւն): Հերտերը դոցա հակառակ դնում է *galantitiora* (երբասիրութիւն): որի ուսումնասիրութեան ընթացքում «մի քանիսը այնքան են յառաջադիմում, որ իրանց մայրենի լեզուն անգամ մօռանում են և դուրս են գալիս այնպիսի տղաներ, որոնք չեն կարողանում քերականորէն և առանց տառասխալի մի բան գրել: ինչպէս երևում է, նա աչքի առաջ ունի այն հանգամանքը, որ վերջին 150 տարուայ ընթացքում պաշտանկերում և ազնուական շրջաններում ընդունուած էր իրենց երեխաների դաստիարակութիւնը յանձնել զանազան

Ֆրանսիացիների:

Մենք տեսնում ենք, որ երկու հեղինակներն էլ կրթութիւնը մարդութեան (*просвещения*) հակառակ են դնում կրթութիւնը մարդութիւն կդառնայ, եթէ նա իւր միակ նպատակն է դրել անիկին որ և է պատահական, արտաքին նպատակի համար, որ և է կոչման համար ընդունակ զարձնել, կամ եթէ նպատակ է դրել նորան որ և է պայմանական, օրինակ կրօնական կամ դաստիարակչին ձեւակերպութեան յարմարեցնելը:

Այս դէպքում մարդը, որպէս մարդ, կորչում է, և էպպէս այդ երեւոյթը մինչև այսօր էլ բոլոր ուսումնասիրաներում կայ: Լատինական դպրոցներում երեխաները մարդուում են լատիներէնի դիտութեան մէջ, հարուստ տներում բարեկրթութեան և քաղաքավարութեան մէջ: Այսպէս է գանգատուում Ռուսոն. «Հասարակութիւնը իւր ձեռքն է առնում երեխային մանուկ հասակից և չի թող տալիս, որ նա լինի այն, ինչ որ է: չի թող տալիս, որ նա իւր բնատուր ոյժերի բնական զարգացմանը հասնի: Սորա հակառակ Ռուսոն և նորա հետ միասին նաև մանկավարժութեան գերմանացի վերանորոգիչները պահանջում են, որ կրթութիւնը ազատութիւն տայ և օգնական հանդիսանայ մարդկային բոլոր հակումների ազատ զարգացմանը: այսպիսի կրթութեան արդիւնքը կլինի մարդու իսական պատկերը: Այսպէս ուրիշն կրթութիւնը ներկայանում է դաստիարակութեան համար նոր իդեալ: Օրգանական զարգացման ծանապարհով ազատ կազմակերպուող, բնական, կատարեալ անձը, որ կատարեալ լրութեամբ արտայայտում է մարդկային բնութեան բոլոր կողմերը, հակադիր է այն խեղաթիւրուած կերպարանքին, որ պայմանական մարդութեան արդիւնք է: Փր. Շլեյկեր այս մտքով է ասում թէ. «Ամենամեծ բարիքը և միակ օգտակար բանը կրթութիւնն է» (*Athenäum* 1, 9):

Պետալուացին դպրոցի մէջ մտցնում է ազատ, հանրամարդկային կրթութեան գաղափարը իսկ Հերտերը գիտնական դպրոցի նպատակն է համարում այդ տեսակ կրթութիւնը: Այդպիսի կրթութեան նախատիպը նա տես-

նում է հին ազգերի մէջ և առաւելապէս յոյների մէջ: Եւ այս է այն հիմնական գաղափարը որ նկատում է այն ժամանակներում լոյս տեսած ամեն տեսակի գրութեան մէջ: Ազատ և բազմակողմանի կրթութիւն ոչ մի երկրին այնքան յատուկ չէր որքան հին Յունաստանին: Այստեղ մարդը իրօք հասել է իւր նպատակին, իսկապէս տիրացել է արարչագործ բնութեան նախասահմանած կերպարանքին: Մենք տեսնում ենք այստեղ կատարեալ ծաղկման հասած մարդկային էակի ինչպէս զգացական և մտաւոր կողմերը: Եւ այնպէս նաև բարոյական կողմը: Երբքին կատարելութեան յատուկ է գեղեցկութիւնը, ինչպէս երիտասարդութեանը—վայելչութիւնը: Իսկ հոգեւոր կեանքի գեղեցկութեան համապատասխանում է կարգապահութեամբ վարժութիւնների և զաման (ΧΟΛΗ) միջոցաւ կատարելութեան հասցրած սքանչելի մարմնի մէջ արտայայտուած և մարմնացած գեղեցկութիւնը: Երբքին իրանք մարդու կրթութեան մասին իրանց ունեցած իդէալը արտայայտում էին καλακαγατία բառով: Այս խօսքը գեղեցկութիւնը և առաքինութիւնը մի գաղափարի մէջ է միացնում:

Անցեալ դարու վերջի և ներկայ դարու սկզբի գերմանական ամբողջ գրականութիւնը լիքն է այսպիսի սկզբունքներով: Այդ սկզբունքներն են իշխում նոր հումանական մանկավարժութեան մէջ. նոքա են կազմում բարձրագոյն կրթութեան այն վերանորոգման գաղափարական հիմքը, որ մեր դարու առաջին քառորդին մտած է գերմանական բոլոր թաղաւորութեանց մէջ: Պրուսիայում այդ վերանորոգումը մտել է Շիլլերի և Վոլֆի բարեկամ Վիլհելմ Հումբոլտի ղեկավարութեամբ: Եունարէնը, որ մինչև այդ ժամանակ գիտական դպրոցում երկրորդական տեղ ունէր, այժմ դարձել էր գիմնազիական շրջանի ուսման էական և անհրաժեշտ մասը. մի գիտութիւն, որ յայտնի պատճառներով անհրաժեշտ է սատուածարանների համար: Բացի սորանից Պատուի նման չափազանց ոգևորուող մարդիկ բոլորովին լուրջ պահանջում էին, որ գերմանական երիտասարդութիւնը, սկսած պրինցից մինչև օրով բանող մշակի որդին ուսանէր

յունարէն լեզուն: Եւ իրօք, եթէ կրթութիւնը՝ մարդու իսկական կրթութիւնը Երբքին նման ապրել, մտածելն ու զգալն է և եթէ մեզ՝ հիւսիսային բարբարոսների հնարաւոր է այդպիսի կրթութեան հասնել միայն յոյն հեղինակների միջոցաւ, յունական հոգու հետ յարստութեան մէջ մտնելով, այն ժամանակ ներկի է գլխի մի մասնու կարգին մարդ դառնալու հնարաւորութիւնն: Եւ իրենց վրէժը: Այժմ չկայ այն ոգևորութիւնը, նրանից միայն մի խիստ օրէնք է մնացել, որի հիման վերայ անարգել քննութեան են թողնում գերմանական համալսարաններում միայն նորան, ով հասունութեան վկայական ստանալու համար առած քննութեան ժամանակ ապացուցել է իւր յունարէն լեզուի տարբերին ծանօթ լինելը: Մի ինչ որ օրհասական բան է այն իրողութիւնը, որ մէկ շրջանի իդէալները հետեւեալ շրջանի համար կանոնադրի յօդուածներ են դառնում:

Գ) Էական նշանակութիւնը: — Այժմ փորձենք որոշել կրթութեան գործի էութիւնից բխած իսկական ըմբռնումը:

Ստուգաբանօրէն Bildung (կրթութիւն) խօսքը ընդհանուր առմամբ նշանակում է որ և է նիւթի նախօրօք գոյութիւն ունեցած ձևի կամ պատկերի (Bild) համեմատ, ընդունած ձևակերպութիւնը. իսկ մասնաւոր էակի դեռ անորոշ սաղմից կամաց կամաց զարգանալը և կատարեալ կերպարանք առնելը և այնուհետև նոյն այդ կերպարանքը: Վերջին իմաստով նա համապատասխանում է նաև Արիստոտելեան entelecheia գաղափարին և նշանակում է այն սղմը, որ զարգանալով հասել է կատարեալ կերպարանքի էութիւնը ներկայացնող ձևին: Այս որոշման համաձայն

1. Ընթերցողներից նոքա, որոնք կցանկանած աւելի մօտից ծանօթանալ այս խնդիրներին, թող կարդան իմ երկրորդ գիրքը „geschichte des gelehrten Unterrichts auf den deutschen schulen und Universitäten“ որ տեղ եւ մանրամասն նկարագրել եմ ինչպէս նոր—հումանականութեան մտաւոր շարժումը, այնպէս և այս գաղափարների հիման վերայ կառուած դպրոցական բարենորոգումները, նկարագրել եմ նաև նոր ժամանակի այդ ուղղութեան հակառակ գործող ուղղութիւնը:

կրթութեամբ պիտի համարենք այն մարդուն որ իւր մէջ մարմնացնում է մարդու զաղափարը կամ տիպարը իւր զուտ և ամբողջական ծագմամբ։ Որովհետեւ մարդկանց գնահատութեան ժամանակ զիտուոր նշանակութիւն է տրուում նոցա ներքին կեանքին, իսկ վերջինս իւր կատարեալ զարգացման է հասնում առաջագոյն սերնդի դաստիարակչական աղբեցութեան շնորհիւ, ուստի կարելի է ասել թէ կրթութեամբ է այն մարդը, որի մէջ ուսման և կրթութեան շնորիւ մարդկային բնատուր ունակութիւնները զարգանալով դարձել են անհատական մի պատկեր, որ լիովին պատկերացնում է մարդու հոգևոր էութիւնը։

Այս ընդհանուր գծերից մասնաւոր հետևութիւններ հանելը բարոյագիտութեան գործն է։ Հետևելով Պրատնական փիլիսոփայութեան (որ իւր ներքին կեանքի մէջ մտցրած խորիմաստ և պարզ երեք բաժիններով՝ միաք, կամք և զգայութիւն, մանկավարժին տալիս է գործնական գործադրութեան համար բաղմամբ յարմար սկզբունքներ) մենք կարող ենք նորա բարոյագիտութեան ձևակերպութեամբ (ФОРМУЛА) կատարելապէս սահմանադրել մարդու զարգացման նպատակը։ Արիութիւն, արի կրթութիւն — ահա թէ որտեղ են միանում հետևեալ երեք առաքինութիւնները կամ արժանիքները՝ իմաստութիւնը, քաջութիւնը և խոհեմութիւնը։ Կրթութեամբ է հոգեպէս քաջ է նա, որի միտքը իւր պարտքը կատարում է, այսինքն թափանցում է իրականութեան մեծ և աստուածային իմաստները և նորա զաղափարով որոշում է կեանքը, մէկ էլ նա, որի մէջ ազնիւ կրքերը համարձակութիւնը, փառասիրութիւնը, բարեպաշտութիւնը և ասելութիւնը դէպի վառ նորա կամքի զօրեղ զրդիները դառնալու չափ զարգացած են, վերջապէս նա, որի զղայական ձգտումները այնպէս կանոնաւորւած են և զսպուած, որ ոչ միայն իրենց լին ենթարկում և մինչև անգամ չեն ել զփութարացնում հոգեկան կեանքը այլ ընդհակառակը իբրև դժբախտ են ծառայում նոցա համար և նորա մարմնացումը դառնում։

Եւ իրօք, կրթութեան այս լիզեպին

պէտք է ընդհանուր նշանակութիւն վերագրենք, այն է՝ պարզ և խորը՝ ամեն բանի ուղին ու ծուծը թափանցող, բնական և պատմական իրականութեան գիտակցութիւն, իրեն վիճակի և նպատակների մասին հաստատուն որոշումն, զօրեղ՝ մարդկային բարձրագոյն նպատակներին յատուկ ցանկութիւնների անհատականութեան դէմ ինքն իրեն համար նեցուկ ծառայող, կամք, տեղին և վայելուչ համարութեամբ բաների նուրբ գիտակցութիւն, վերջապէս խիստ սահմանների մէջ գրուած և դէպի զուարճութիւնը ազնուացրած ձգտումներով, զգայականութիւն, որը ամեն ստոր բան վանելով և հասցնելով ընդունակութիւնները ամեն գեղեցիկ բաների աստիճանին, հոգևոր կեանքի համար իբր մի հիմնական գոյն (ФОНТ) և իբր մի ձայնագոր (РЕЗОНАТОР) է ծառայում։ Ահա այսպիսի որոշումներով թերևս հնարաւոր լինի սահմանադրել բոլոր ժամանակների համար այն պատկերը, որ համապատասխան պէտք է լինի մարդու էութեանը, կամ նորա աստուածային զաղափարին։ Այս իմաստով մենք համարձակ կարող ենք վերև յիշած տեսութիւնը ընդունել, որին համապատասխանում է և նոր — հումանական ուղղութիւնը՝ նաև Ռուսոյի և Պետտայոցու տեսութիւնը։

Սակայն այստեղ հարկաւոր է աւելացնել որ մարդկային կրթութեան այս ընդհանուր պատկերը իրագործման բաղմատեսակ եղանակներ է թողլադրում կամ աւելի ուղիղ է ասել պահանջում է, որովհետև ընդհանրապէս մարդ, գոյութիւն չունի։ Իրականութեան մէջ մենք միշտ մարդուն տեսնում ենք որպէս առանձին, պատմականօրէն որոշ արարած, բնութեան ստորին դասակարգի արարածները՝ կենդանիները, մեկնոյն ցեղի տիպարի նոյնանման օրինակներն են ներկայացնում, օրինակ մի ցեղի բզեզը կամ թիթեռը բոլորովին նոյնն է այստեղ և հարևան երկրում, այսօր և հաջար տարի սորանից յետոյ։ Բայց այլ է մարդը, հոգին, նա տարբեր է ամեն ազգի մէջ և ամեն դարում։ Եւ այս պակասութիւն չէ, ընդհակառակը, մենք պիտի ասենք, որ սա մարդու առանձնայատկութիւնն է։ Նորա բնութիւնը այնքան հարուստ է, որ

նա չի վերջանում բնական — պատմական կատարելագործուած տիպարի մարմնացմամբ, նորա յայտնութեան համար անհրաժեշտ է շարունակ ձևերի անծայր բազմազանութիւն, որ և մենք գտնում ենք պատմական անձանց ու ազգերի մէջ և նոցա զարգացման ասպարիզում:

Այսպէս մենք չենք հաւատում հին և նոր հումանիստներին, որոնք ասում են թէ իբր հին ազգերի մէջ, օրինակ Յունաց մէջ, որպէս ճիշտ տիպարի մէջ կատարելագոյն մարմնացած է մարդու իսկական էութիւնը, և այնպէս, որ միւս բոլոր պատմական տարրեր երևոյթները միայն շատ թէ քիչ ազդեց և անցաւ ող պատճէններ ևն հանդիսանում: Ընդհակառակն մենք կասենք, որ իւրաքանչիւր ժողովուրդ, իւրաքանչիւր դարաշրջան ունի իւր յատուկ ինքնուրոյն ոյժը, արժանիքն ու գեղեցկութիւնը և որ նա ամենեւին պարտաւոր չէ իւր այս բնածին յատկութիւններից հրաժարուել կարծեցեալ բնական տիպարին մօտենալու համար: մանաւանդ որ այսպիսի փորձը բոլորովին անօգուտ բան կլինէր, որովհետեւ դորա արդիւնքը կլինի միայն անգոր ընդօրինակութիւն, ինչպէս յաճախ գերմանական ազգի պատմութիւնը յոյց է առել: Ժ.Ջ. դարու հումանիստ բանաստեղծները հռովմայեցի չդարձան, ոչ էլ Ժ.Է. դարու ձևապաշտ պալատականները Ֆրանսիացի, ինչպէս և անցեալ դարու վերջին և ներկայ դարու սկզբի հելլենականութեան երկրպագուները յոյն չդարձան:

Այստեղից մեր քննութեան առարկայ դարձած գաղափարի նոր որոշումն է ծագում: Որովհետեւ առանձին մարդը հոգեւոր կեանքով է սուրբում, միայն որպէս մի բաղադրիչ մասն պատմական կազմերից մէկի, որպէս որդի և անդամ որ և է ազգութեան, ուստի մենք կրթութիւնը կարող ենք համարել նաեւ դաստիարակութեան և ուսման միջոցաւ ձեռք բերած, իրեն ազգութեան և ժամանակի պատմական հոգեւոր կեանքին մասնակցելու ընդունակութիւն: Իւրաքանչիւր մարդու աշխարհաստեղծութիւնն ու կեանքի նպատակը որոշուում է նորան շրջապատող պատմական հանգամանքներով: Նա բնութիւնը ըմբռ-

նում է միայն զիտութեան միջոցաւ, աշխարհ և կեանքը — միայն իւր ժամանակի և իւր ազգութեան կրօնի ու փիլիսոփայութեան միջոցաւ: Նմանապէս և կեանքի նպատակն որա համար որոշուում է ժամանակի պատմաներով և իւր ազգի վիճակով: Այս պատճառով կրթութեան նպատակը կարելի է հետեալ կերպով որոշել: կրթութիւնը պէտք մարդու զարգացմանը այնպիսի ուղղութիւն տալ, որ նա ընդունակ դառնայ իրեն շրջապատող բնական և պատմական հանգամանքներն հասկանալու և կարողանայ այդ հանգամանքների մէջ գործել: Ինքն ըստիւնքեան այստեղ հասկացում է նաեւ ճշմարիտ վերաբերմունք դէպի կեանքի բոլոր բարձր աստիճաններն ու նպատակները, դէպի կրօնն ու բանաստեղծութիւնը, զիտութիւնն ու արուեստը, պարապմունքներն ու հասարակական կեանքը, սովորութիւններն ու բարքերը: Կրթութեան է նաև ով կատարեալ զիտութեան և համոզմունքով կարողանում է որոշել իւր յարաբերութիւնը, իւր պատմական շրջանի մտքերի և գաղափարների, ապրելու ձևերի և ձգտումների նկատմամբ:

Այժմ մենք կարող ենք աւելի առաջ գնալ: Իւրաքանչիւր ազգութիւն բաժանուած է միմեանցից տարրեր շրջանների, որոնք տարրեր ձևերով են մարմնացնում իրանց կենսական բովանդակութիւնը: Պարապմունքների հասարակական զիրքի սեռի տարրերութիւնները, աչքի ընկնող տարրերութիւններ են յառաջ բերում նաեւ կեանքի նպատակների մէջ: Սեռ էթն կրթութեան լինելը ազգային ընդհանուր կեանքին զիտակցաբար մասնակից լինելու ընդունակութիւն է, այն ժամանակ կրթութիւնը պիտի յարմարուի նաեւ այն ժամանակու պարտականութեանը, որ ընդհանուր կեանքի մէջ մասնաւոր անհատը կոչուած է կատարելու: Բաղմատեսակութիւն պէտք է և ոչ թէ միակի պութիւն: Ծարբեր կրթութիւն է պէտք կրթութեան տարրեր այդ մարդու համար, այլ կրթութիւն է հարկաւոր զիտակեանին այլ սպային կամ գիւղացուն: Իսկապէս բարեխղճաբար կրթութեան կհամարենք մենք այն մարդուն, որ ընդունակութիւն է ձեռք բե-

րել, ինքն իրեն շրջապատող իրականութեան մէջ այն գիրքից առաջնորդուելու որի վերայ նա կանգնել է բաղդի և բնութեան շնորհիւ և կարողանում է իրան համար հողեոր աշխարհ ստեղծել, որ մեծ լինի թէ— փոքր, և նոյն է Կրթութիւնը որոշուում է, ոչ թէ մարդու սովորածի կամ ուսումնասիրածի քանակութեամբ, այլ, այն ոյժովը և ինքնույնութեամբ, որով նա իւրացրել է ուսածը և որով նա օգտուում է իւր սովորածից իրան առաջ եղած երեւոյթները ըմբռնելու և օնահաստեղծ համար: Այդ պատճառով մենք առանց տատանուելու կրթութեամբ կհամարենք նաև այն դիւղացուն, որ ծխական զարդի ուսումից այն կողմ չի անցել և շատ կարելի է երբեք չի լսել Հերդերի ու Շիլլերի անուաները, եթէ միայն նաև խելացի կերպով օգտուելով հանգամանքների ներկայացրած միջոցներից, ամփոփ աշխարհայեցողութիւն է ստեղծել իւր համար, այն թափան և պատմական աշխարհի մասին, որի մէջ ինքը ապրում է: Եւ եթէ նա կարողանում է ինքնուրոյն կերպով որոշել իւր դիրքը իրեն շրջապատողների մէջ, Ընդհակառակը մենք չենք քաշուի անկիրթ համարել (եթէ նոյն իսկ աշխարհի բոլոր ուսումնավայրերից և յանձնաժողովներից վերցրած ներկայացնի) այն մարդուն կամ կնոջը, որ ինչ նիւթի մասին կամենաք կարող է խօսել, սակայն անգիր արած ոճերով և ուրիշ խօսքերով, Կրթութիւնը որոշուում է ոչ թէ գիտեցածի նիւթով, այլ— ձևով:

Խնչպէս տեսնում ենք, այն եզրակացութիւնը որին մենք հասնեալ կրթութիւն խօսքի համար սովորական դարձած գործածութեան բողոքովին հակառակ է: Խօսքին սովորական դարձած գործածութեան իմաստին նայելով, կրթութիւնը հանդէս է գալիս նախ և առաջ իրի որոշեալ գասակարգի մի սեպհականութիւն, դիւղացին կամ կոչակարը չի կարող «կրթութեան» թուին պատկանել, իսկ սպան կամ գաղանի խորհրդականը, եթէ նա նոյն իսկ մասնաւոր գէպըում խօսի կամ պահէ իրեն որպէս անկիրթ մէկը, այնուամենայնիւ կմնայ «կրթութեամբ արդէ» բանը նրանումն է, որ ընդհանուր ընդունելութիւն գտած իմաս-

տով կրթութեամբ լինել, նշանակում է զարդական գիտութիւն ունենալ, որով և բնականութեան որոշ շրջանը տարբերուում է ամբողջից: Բայց եւ ոչ մի հնարաւորութիւն չեմ գտնում կրթութիւն խօսքի այս իմաստով գործածութեանը համաձայնելու առանց այդ խօսքի այն իսկական իմաստի վերայ բռնանալու, որ բուն գործն է արտայայտում: Եթէ կրթութիւնը՝ բառի ստուգարանութեան և մարդու այս խօսքի մասին ունեցած գաղափարին համաձայն՝ նշանակում է ներքին ստեղծագործող սկզբունքների հիման վերայ, ներքին կեանքի ձևափոխութիւն, այն ժամանակ մենք չենք կարող մտապատկերների և բառերի պաշարը կրթութիւն համարել, եթէ նոյն իսկ լատիներէն կամ յունարէն են այդ բառերը: Եթէ մէկը նոյն իսկ ընդուն իմանար Մէյնի կամ Բոռնհայմի գործերը, այնուամենայնիւ մենք ստիպուած չէինք լինի նորան կրթութեամբ համարելու, ընդհակառակը միայն կենթադրենք, որ նա ըստ իւր ներքին բովանդակութեան անկերպարան է և անկիրթ, որովհետեւ միտքը իսկապէս այնքան ոյժ չունի, որ կարողանայ այդ անչափ նիւթը իւրացնել և իւր մէջ պահել: Ընդհակառակը մենք չենք կարող հոգեպէս կատարելապէս կրթութեամբ չհամարել այն մարդուն, որի գործնականութեան շրջանը շատ նեղ է, բայց որը մշակել է իրեն համար ամբողջական և հաւատառուն ներքին կազմ, որ և հնարաւորութիւն է տալիս նորան պարզ և անխախտ կերպով որոշելու իւր յարաբերութիւնը գէպի իրերն ու մարդիկը: Այսպէս է օրինակ Փրից Ռէյտերի «Ստրամբիդա» վէպի հերոս՝ Գաւերմանը: Ընդամիտ է, նա չգիտէ աշխարհի և կեանքի վերաբերմամբ իւր ունեցած աշխարհայեցողութեան մասին խօսել, բայց իսկապէս մի որոշ աշխարհայեցողութիւն ունի նա և, որ զխառնուր է, նորա համաձայն էլ ապրում է: Համեմատեցեք այս մարդու հետ այն սննկապատի աղջիկները, որի մօտ նա ծագայում է: Խնչպէս յօդս է ցնթում նոցա կրթութիւնը և երեան է գալիս նոցա ներքին կեանքի խղճալի աղքատութիւնը, երբ խօսքը այլ ևս այցելութեանց և դատարկութեանց մասին չէ:

Մենք կարող ենք սակայն որոշ չափով մօտենալ կրթութիւն խօսքի ընդունում իմաստին, եթէ ընդունենք սահմանափակ և ընդարձակ կրթութեանց մէջ եղած տարբերութիւնը (մենք այս բաժանումը գերազանցում ենք կրթութեան համար գործածական դարձած բարձրագոյն և ստորին բաժանումներին)։ Կրթութեան ընդարձակութիւնը կախում է իրականութեան այն շրջանի մեծութիւնից, որի հետ հոգին յարաբերութեան մէջ է մտնում։ Այս տեսակետից ճշմարիտ որ մեծ զանազանութիւն կայ մի զիւղացու, որ կրթէ իւր հայրենիքից դուրս չէ եկել և մի մարդու մէջ, որ «չափ մարդիկ քաղաքներ է տեսել և բարքերի հետ ծանօթացել»։ օրա-վարձով բանող մի մշակի, որ զիւղական դպրոցում միայն կրօնագիտութիւն է սովորել և մէկ ուրիշի մէջ, որ զիմնագիտում և համալսարանում լեզուագիտութիւն և պատմութիւն, բնական գիտութիւններ ու փիլիսոփայութիւն է սովորել։ Այն նիւթը, որ ունի երկրորդը իւր հոգու կրթութեան համար, աշխարհի և կեանքի մասին ինքնուրոյն դադափար կազմելու համար, անհամեմատ աւելի հարուստ է։ Աչքի առաջ ունենալով հէնց այս վերջին հանգամանքը, սովորական խօսքով կրթուած է կոչուում միայն նա, ով դպրոցական ուսման, ծանադարհորդութեան և հասարակութեան մէջ վարած կեանքի միջոցաւ, բազմատեսակ յարաբերութեանց մէջ է մտել աշխարհի և մարդկանց հետ։ Բայց այս դէպքում այն հանգամանքի վերայ թէ արդեօք նորա ներքին կեանքը որ և է օգուտ ստացել է դորանից թէ՞ ոչ, քիչ է ուշադրութիւն դարձուում։ Իսկ մենք ընդհակառակը կասենք, կրթուած ասելով նախ և առաջ հասկանում ենք իւր ներքին բովանդակութեամբ զարգացած, ինքնագոյ հոգեկան կազմ. նեղ մտքով կրթութեան համար, ինչպէս սովորական խօսքի մէջ հասկացուում է, բացի սրանից պահանջուում է նաև ընդարձակ յարաբերութիւն իրականութեան հետ. յատկապէս ընդարձակ յարաբերութիւն հոգեկան պատմական կեանքի հետ։ Մարդու կրթութիւնը այնքան ընդարձակ է և այնքան հաստատուն, որքան բաղմանկողմանի է նորա գիտութիւնը և

որքան նա խորն է ըմբռնում մարդկային արարքները։ Առանձին մարդու հոգին յայտնուում է միայն այն ժամանակ, երբ համաշխարհային հոգու հետ շփման մէջ է մտնում, որ դարձանում է մարդկութեան պատմական կեանքի մէջ։

Այս տեսակետից մեզ համար հասկանալի կլինի թէ ինչո՞ւ սովորական խօսքի մէջ կրթութիւնը աւելի սերտ յարաբերութեան մէջ է դրուում գրականութեան և գեղարուեստի փիլիսոփայութեան և բանաստեղծութեան հետ, քան բնական գիտութիւնների և մաթեմատիկայի հետ, քան քաղաքական և տնտեսական կեանքի հետ։ Առաջիններում ազդութեան հոգեւոր կեանքը աւելի ազատ և սկզբնական ձևով է արտայայտուում։ Մոյն պէս այստեղից հասկանալի է դառնում թէ ինչո՞ւ լեզուների գիտութիւնը յաճախ իբր չափ է ընդունուում կրթութեան համար։ Իր և է լեզուի գիտութիւնը մեր և այն ազդի մէջ, որ այդ լեզուով է խօսում յարաբերութիւն է մտցուում։ Այս պատճառով մի նոր լեզու սովորել նշանակում է բարեկրթութեան թագաւորութեան նոր սահմանի մէջ մտնել։ Այսպիսով կրթութեան վերջնական նպատակին հասած կլինէր այն մարդը, որը կարող կլինէր ասել իւր մասին թէ ոչ մի մարդկային բան նրան անծանօթ չէ. մի նպատակ, որ իսկապէս անհասանելի է և փառաքանկութեան առարկան է։

Ինչ որ տուած է մարդկային ցեղին
«Դմ» մէջ վայելել կուզեմ ես ինքնին։

(Նաբոնեափէէ)



ՎԱՐԴԳԷՍԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Վաղարշապատ եւ իւր առասպելը—
Ըստ պատմական տեղեկութեանց Բ. դարում
Բ. յ. հռոմայեցիք, երբ պարթեաների հետ
կռուելով առնում են Հայաստանի մայրաքա-
ղաքն Արտաշատ և աւերում (163 թ. Բ. յ.)
շինում են մի քաղաք, ուր պահում են զժ-